



ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ
Գրայնիք & Ինվեստիցիոն Ինժեների

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հաստատված է՝

«ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության
 15.03.2018թ. 44-Լ որոշմամբ

Ուժի մեջ է՝ 15.03.2018թ.-ից

Բանկի քարտապան Հաճախորդներին տրամադրվող վարկային պրոդուկտների նկարագրություն

ՀՀ	Պրոդուկտի անվանում	Քարտի տեսակ	Առավելագույն սահմանաչափ	Ժամկետ	Մարման նկարագրություն և առանձնահատկությունները	Մակագին/ տոկոսադրույք
1	Վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Standard, MC Gold, MC Business	Ֆիզ.անձանց, max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար 10,000 Եվրո Իրավ.անձ, max. 10,000,000 ՀՀ դրամ 20,000 ԱՄՆ դոլար 20,000 Եվրո	1-3 տարի	Մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը վարկառուն պարտավոր է մարել վարկի օգտագործված գումարի առնվազն 10-20 տոկոսը և մարման օրվա դրությամբ վարկի օգտագործված գումարի դիմաց հաշվարկված տոկոսներն ամբողջությամբ: Մայր գումարի ամբողջական մարումը կատարվում է պայմանագրի ժամկետի վերջում:	Մինչև 18% 10-16% 10-16%
2	Նվազող սահմանաչափով վերականգնվող	MC Standard, MC Gold, MC Business	Ֆիզ.անձանց, max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար	1-3 տարի	Մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը վարկառուն պարտավոր է ամբողջությամբ մարել վարկի օգտագործված գումարի դիմաց մինչ այդ օրը հաշվարկված տոկոսները:	Մինչև 18% 10-16% 10-16%

	քարտային վարկային գիծ		10,000 Եվրո Իրավ.անձ, max. 10,000,000 ՀՀ դրամ 20,000 ԱՄՆ դոլար 20,000 Եվրո		Պայմանագրի գործողության վերջին ամիսներին՝ առնվազն 5 կամ հաճախորդի հայտում նշված քանակով, բայց ոչ պակաս քան 5 ամիս, Բանկը յուրաքանչյուր ամիս իրականացնում է վարկի առավելագույն սահմանաչափի նվազեցում՝ սահմանաչափի գումարի համապատասխան տոկոսի/մասի չափով: Նվազեցումը կատարվում է քարտին դրամական միջոցների մուտքագրման օրը: Սահմանաչափի նվազեցվումը կատարվում է նաև վարկի չօգտագործված մասի չափով:	
3	Արտոնյալ ժամանակահատվածով վերականգնվող քարտային վարկային գիծ	MC Gold	Max. 5,000,000 ՀՀ դրամ 10,000 ԱՄՆ դոլար 10,000 Եվրո	1-3 տարի	Եթե մինչև հաջորդ ամսվա 16-րդ օրը (ներառյալ) վարկառուն մարում է օգտագործված վարկային գծի գումարն ամբողջությամբ, ապա Բանկն օգտագործված գումարի դիմաց տոկոսներ չի հաշվարկում: Եթե Վարկառուն նշված ժամանակահատվածում մարում չի կատարում կամ մարում է օգտագործված վարկային գծի գումարն ոչ ամբողջությամբ, ապա Վարկատուն հաշվարկում է տոկոսներ օգտագործված գումարի դիմաց՝ սկսած Բանկի Գործառնական օր համակարգում օգտագործված գումարի ձևակերպման օրվանից մինչև պարտավորության ամբողջական կատարումը:	Կանխիկացման միջնորդավճար 0.5% Մինչև 18% 10-16% 10-16%
4	Չվերականգնվող քարտային վարկային գիծ	ArCa կամ MC Standard	Համաձայն Բանկի ՎԿ որոշման	Համաձայն Բանկի ՎԿ որոշման	<ul style="list-style-type: none"> • Անուիտետային • Մայր գումարի հավասարաչափ մարման ձև • Մայր գումարի մարումը ժամկետի վերջում 	Համաձայն Բանկի ՎԿ որոշման

Պարզաբանումներ՝

- Բանկի աշխատակիցների վարկային քարտային գծերը տրամադրվում են Բանկի աշխատակիցներին վարկերի տրամադրման կարգի համաձայն:
- Մույն պայմանները կիրառվում են առանց ապահովության քարտային վարկային գծերի տրամադրման ժամանակ, այլ դեպքերում պայմանները սահմանվում են Բանկի այլ իրավական ակտերի համաձայն: